ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 հուլիսի 2021 թվականի N89-Ա

ՇՈՒՇԱՆ ԳՈՒԼՔԱՆՅԱՆԻՆ, ՀԱՍՄԻԿ ԳԻԺԼԱՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը, համաձայն 2021 թվականի հուլիսի 13-ին <<Կարեն Մաչանյան>> /որակավորման վկայական 0244/ ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման հատակագծի և 2021 թվականի հուլիսի 16-ին **Շուշան Աշոտի Գուլքանյանի** դիմումի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 5-րդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող քաղաքացիներ **Շուշան Աշոտի Գուլքանյանին, Հասմիկ Ֆելիքսի Գիժլարյանին** համասեփականության իրավունքով պատկանող 806,0 քառակուսի մետր հողամասից /կադաստրային ծածկագիր 04-065-0006-0005/ առանձնացվող 403,0 քառակուսի մետր հողամասին՝ /Առանձնացվող հատված 1/ ըստ հողամասի բաժանման հատակագծի, տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան 5-րդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 9/1:

Նույն հողամասից առանձնացվող մյուս՝ 403,0 քառակուսի մետր հողամասին /Առանձնացվող հատված 2/ թողնել Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան 5-րդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 9 հասցեն:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հուլիսի 19
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 հուլիսի 2021 թվականի N90-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ-ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N21-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ **Գուրգեն Վալերիի Մանուկյանին** տրամադրել 100 000 ՀՀ դրամ դրամական օգնություն կնոջ՝ **Լիաննա Ալբերտի Ավետիսյանի** մահվան համար /մահացել է 05.07.2021թ., հիմք մահվան վկայական ԲԱ423318, տրված 09.07.2021թ. ՔԿԱԳ գործակալություն ՔԿԱԳ տարածքային բաժնից/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հուլիսի 19
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 հուլիսի 2021 թվականի N91-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականիմայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով՝ ըստ որի կառույցներն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ ԱՁ <<Կարեն Մաչանյան>>-ի /որակավորման վկայական 0244/ կողմից 2021 թվականի հուլիսի 15-ին տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, Վազգանուշ Վարդանի Բարսեղյանի 2021 թվականի հուլիսի 16-ի դիմումը, **որոշում եմ.**

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակչուհի Վազգանուշ Վարդանի Բարսեղյանի գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 0,0652 հեկտար տնամերձ հողամասի և նրա վրա 1960 թվականին կառուցված 337,9 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շենք-շինությունների նկատմամբ (բնակելի տուն 134,8 քառակուսի մետր, ծածկ 17,4 քառակուսի մետր, ծածկ 21,0 քառակուսի մետր, ծածկ 25,3 քառակուսի մետր, բնակելի տուն /նկուղ/ 125,8 քառակուսի մետր, ծածկ 13,6 քառակուսի մետր):

2. Հողամասին և բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան Երիտասարդության փողոց N29:

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հուլիսի 19
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2021 թվականի N 92-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումների դրույթներով, հաշվի առնելով կառույցն իրականացրած անձին՝ Հայկ Ռուստամի Գևորգյանին, գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքով/ տրամադրելու վերաբերյալ 2021 թվականի հուլիսի 20-ին տրված թիվ 1 գրավոր առաջարկությունը և վերջինիս կողմից տրված համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի սեփականությունը հանդիսացող /սեփականության իրավունքի վկայական N20072021-04-0028, կադաստրային ծածկագիր 04-065-0062-0098/, հողակադաստրային տարածագնահատման 11-րդ գոտու, Մասիսի փողոցի 2-րդ փակուղու թիվ 2 հասցեում կառուցված 61,0 քառակուսի մետր /արտաքին մակերեսով/ ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0,0061 հեկտար հողամասն ուղղակի վաճառքով օտարել այդ շինությունը ինքնակամ կառուցող՝ Հայկ Ռուստամի Գևորգյանին:

2. Ավտոտնակի վաճառքի վճարը՝ յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 1969 ՀՀ դրամ է՝ 61,0 x 1969 = 120 110 ՀՀ դրամ:

3. Ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասն օտարել կադաստրային արժեքով: Մեկ հեկտարի կադաստրային արժեքը 44 418 000 ՀՀ դրամ է՝ 0,0061 x 44 418 000= 270 950 ՀՀ դրամ:

Որոշման ընդունման օրվանից սկսած, շինության և հողամասի օրինակացման համար հաշվարկված վճարները, 60-օրյա ժամկետում պետք է վճարվի՝ Մերձավան համայնքի վարչական եկամուտների 900325175157 հաշվեհամարին 120 110 ՀՀ դրամ, իսկ 270 950 ՀՀ դրամը՝ ֆոնդային եկամուտների 900325175132 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

Վճարման ենթակա է՝ ընդամենը 391 060 ՀՀ դրամ:

4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հուլիսի 20

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հուլիսի 2021 թվականի N93-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշմամբ, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ ԱՁ <<Կարեն Մաչանյան>>-ի /որակավորման վկայական 0244/ կողմից 2021 թվականի հուլիսի 20-ին տրված հողամասի հատակագիծը, Վահագն Նիկողոսյանի կողմից լիազորված անձ Արգիշտի Հովհաննիսյանի 2021 թվականի հուլիսի 22-ի դիմումը, **որոշում եմ.**

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ Վահագն Ասատուրի Նիկողոսյանի գույքային իրավունքը՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը Արմավիրի մարզի, Մերձավան համայնքում գտնվող (կադաստրային ծածկագիր 04-065-0062-0014) 0,0774 հեկտար տնամերձ հողամասի նկատմամբ:

2. Հողամասին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան Երիտասարդության փողոց 1-ին նրբանցք թիվ 15:

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հուլիսի 22
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2021 թվականի N94-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N21-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակչուհի **Ալիսա Սարդարի Մուրադյանին** տրամադրել 100 000 ՀՀ դրամ դրամական օգնություն հոր՝ **Սարդար Ստեփանի Մուրադյանի** մահվան համար /մահացել է 12.07.2021թ., հիմք մահվան վկայական ԲԱ428451, տրված 22.07.2021թ. ՔԿԱԳ գործակալություն ՔԿԱԳ տարածքային բաժնից/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հուլիսի 27
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2021 թվականի N95-Ա

ՄԱՐԳԱՐԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը, համաձայն 2021 թվականի հուլիսի 29-ին <<Կարեն Մաչանյան>> /որակավորման վկայական 0244/ ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման հատակագծի և 2021 թվականի հուլիսի 30-ին **Մարգարիտ Հունանի Վարդանյանի** դիմումի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երևանյան խճուղի 5-րդ նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող քաղաքացի **Մարգարիտ Հունանի Վարդանյանին** սեփականության իրավունքով պատկանող 895,0 քառակուսի մետր հողամասից /կադաստրային ծածկագիր 04-065-0014-0023/ առանձնացվող 435,0 քառակուսի մետր հողամասին՝ /Առանձնացվող հատված 1/ ըստ հողամասի բաժանման հատակագծի, տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան Երևանյան խճուղի 5-րդ նրբանցք թիվ 2/2:

Նույն հողամասից առանձնացվող մյուս՝ 460,0 քառակուսի մետր հողամասին /Առանձնացվող հատված 2/ թողնել Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան Երևանյան խճուղի 5-րդ նրբանցք թիվ 2 հասցեն:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հուլիսի 30
համայնք Մերձավան